ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Անուշավան, 024453821, aanushavani.gyuxapetaran@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մարտի 2014թվականի N 9-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2014ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 7-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 31-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի, <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով և հաշվի առնելով, որ Անուշավանի գյուղապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետի պաշտոնը շուրջ 4 տարի թափուր է, իսկ նշված այդ պաշտոնի անձնագրով նախատեսված պարտականություններն իրականացնում է տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի գրադարանավարի պաշտոնն զբաղեցնող աշխատակիցը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է
1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2014թվականի քանակը՝ 10:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2014թվականի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի համայնքի ավագանու 2014թվականի հունվարի 14-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2014թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 7-Ա որոշումը:
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համայնքային ծառայության 1-ին կարգի մասնագետի /ծածկագիր 3.2-1/ պաշտոնը հանելու համար

սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին:
5. Համայնքային ծառայության պաշտոնների մասով գյուղապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը փոփոխված համարել՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից Անուշավանի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություն կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

<<5>> մարտի 2014թվական
գյուղ Անուշավան

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԿԱՐՈՅԱՆ ԱՇՈՏ

2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԱՖԻԿ

3. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ՂԱՐԻԲ

4. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ

5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՆԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԵՐՎԱՆԴ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի ԹԻՎ 9-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2014ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը - 10

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը /դրամ/	Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ /%/	Սահմանված դրույքը	Սահմանված դրույքաչափը /դրամ/	Ընդամենը /դրամ/
Հայեցողական պաշտոններ							
1	Օգնական	1	112 500	56.25	1	112 500	112 500
Համայնքային ծառայության պաշտոններ							
2	Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	163 260	81,63	1	163 260	163 260
3	գլխավոր մասնագետ /2.3 -2/	1	158 148	79	1	158 148	158 148
4	1-ին կարգի մասնագետ /3.2 - 2/	1	148 000	74	1	148 000	148 000
5	1-ին կարգի մասնագետ /3.2 - 3/	1	148 000	74	1	148 000	148 000
6	2-րդ կարգի մասնագետ /3.3 -1/	1	82 000	41	1	82 000	82 000
Տեխնիկական սպասարկման անձնակազմ							
7	գրադարանավար	1	73 000	36.5	1	73 000	73 000
8	հավաքարար	1	59 524	29.8	1	59 524	59 524
9	հավաքարար	1	59 524	29.8	1	59 524	59 524
10	պահակ	1	59 524	29.8	1	59 524	59 524

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ե. ՀԱԿՈԲՅԱՆ